

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Քննապահականության նախարարի առաջին տեղակալ Ա. Պապյանի մոտ կայացած հանրային քննարկման

ք. Երևան

30.08.2012թ.

Ժամը 11:00

ՄԱՆՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Ալեքսանդրյան

«Քննապահականության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ

Հ. Ակրոտյան

«Քննապահականության նախարարության աշխատակազմի քարտուղարության արձանագրային և արխիվացման բաժնի պետ

Ա. Նալբանդյան

«Քննապահականության նախարարության աշխատակազմի բնապահականական պետական տեսչության Երևանի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչ,

Գ. Գաբրիելյան

««Էկոլոգիական ակադեմիա»» ՀԿ,

Ա. Իսկոյան

««Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն»» ՀԿ,

Ա. Վերմիշյան

««Բուրգ»» բնապահականական երիտասարդական ՀԿ,

Լ. Սիմոնյան

««Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի»» ՀԿ,

Ս. Արրահամյան

econews.am լրագրող,

Ի. Բախշյան

««168 ժամ»» թերթի լրագրող

Հ. Ղազարյան

««Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն»» ՍՊԸ,

Ա. Մամյան

««Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն»» ՍՊԸ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Ի կատարումն «Քննապահականության նախարարի առաջին տեղակալի» 17.08.2012թ. N02/24.6/11603-12 հանձնարարականի՝ ««Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն»» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա տալու մասին» «Քննապահականության նախարարության որոշման նախագծի քննարկում հասարակական կազմակերպությունների հետ

Ելույթ ունեցան

Ա. Պապյան

Ներկայացրեց օրակարգի հարցը, հայտնելով, որ քննարկվող որոշման նախագիծը 2012թ. օգոստոսի 27-ին տեղադրվել է «Քննապահականության նախարարության ինտերնետային կայքում և իր շնորհակալությունը հայտնեց ներկաներին քննարկմանը մասնակցելու համար

Ա. Ալեքսանդրյան

Ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման գործընթացը, որը բարդ ընթացակարգով իրականացնում է ՀՀ կառավարությունը, որին հայտատուն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում է լիցենզիայի հայտը և պահանջվող կից փաստաթղթերը:

Ընթացակարգի համաձայն լիցենզիայի հայտի փաթեթը լիցենզավորող մարմինը ներկայացնում է ՀՀ բնապահպանության նախարարություն, այնուհետև այն տրամադրվում է լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին՝ ուսումնասիրման և հանձնաժողովի նիստում քննարկելու նպատակով:

Նիստի արդյունքում՝ քննարկումներից և հայտի ու դրան կից ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը պարզելուց հետո կազմվում է արձանագրություն և փորձաքննական եզրակացություն՝ տվյալ հայտատուի վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեությամբ զբաղվելու նպատակահարմարության վերաբերյալ:

Դրական փորձաքննական եզրակացության դեպքում լիցենզավորող մարմին է ներկայացվում նաև հայցվող գործունեության համար լիցենզիա տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Թափոնների ներմուծման հետ կապված հայտնեց, որ մոլիբդեն պարունակող կատալիզատորները ներառված են «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկում», որոնց ներմուծումն ու արտահանումը ենթակա է նախնական հայտավորման: Բացի այդ, «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի հիմնադրույթների համաձայն թափոնները կարող են արտահանվել վերամշակելու հնարավորություն ունեցող այլ երկիր:

Ա. Մամյան

Ներկայացրեց թափոնների վերամշակման տեխնոլոգիան՝ նշելով, որ որպես հումք օգտագործվելու են նավթաքիմիական արդյունաբերության բանեցված մոլիբդեն պարունակող կատալիզատորները, որոնք չնայած գտնվում են թափոնների ցանկում, սակայն համարվում են բավական թանկարժեք երկրորդային հումք: Այն պարունակում է մինչև 21 տոկոս մոլիբդենի օքսիդ: Կատալիզատորները ներկրվելու են նավթ վերամշակող երկրներից:

Ըստ առաջարկվող տեխնոլոգիայի այդ կատալիզատորներից կկորզվի պարունակվող մոլիբդենը, իսկ առաջացած թափոնը կարող է օգտագործվել որպես ջերմակայուն բաղադրիչ: Բնապահպանական տեսանկյունից այն ավելի մաքուր է, քանի որ կատալիզատորի վերամշակումից ձուլվում է արտանետվում, ինչն առկա է մոլիբդենի խտանյութի դեպքում:

Առաջարկեց այցելել գործարան՝ տեղում տեխնոլոգիային ծանոթանալու նպատակով:

Գ. Գաբրիելյան

Որտեղից է ներկրվելու հումքը և մոլիբդենը կորզելուց հետո ինչպիսին է լինելու թափոնի բաղադրությունն ու դրա հետագա ճակատագիրը:

Հավանություն տվեց վերամշակման հիդրոմետալուրգիական եղանակի կիրառման գիտական մտքին:

Ա. Վերմիջան

Եթե համարենք, որ հիդրոմետալուրգիական եղանակով մոլիբդենի ստացումն ավելի կատարելագործված է, ապա ցանկալի է կրճատելով հանքարդյունահանման ծավալներն անցում կատարել հումքի ներկրման տարբերակին:

Ա. Իսկոյան

Ցանկալի է, որպեսզի հակասություններ չլինեն նախատեսվող գործունեության և միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների միջև:

Առաջարկեց հետագայում նմանատիպ քննարկումներին հրավիրել նաև ներկայացուցիչներ բիզնես սեկտորից, քանի որ բնապահպանական և տնտեսագիտական ոլորտն անքակտելիորեն կապված են միմյանց հետ:

Լ. Սիմոնյան

Քննարկվող որոշման նախագծի ձևակերպումը խիստ ընդհանուր է, անհրաժեշտ է կոնկրետ նշել թափոնի տեսակը՝ լիցենզիան ստանալուց հետո այլ վտանգավոր թափոններ վերամշակելուց խուսափելու համար:

Բոլոր հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ամփոփելով քննարկումները ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս. Պապյանն ընդունեց գործարան այցելելու և տեղում տեխնոլոգիային ծանոթանալու «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ ներկայացուցչի առաջարկը և

ՀԱՆՁՆԱՐԱՐԵՑ

Հ. Մկրտչյանին՝

1. սույն արձանագրությունը տրամադրել նիստի մասնակիցներին
2. 2011թ. հունիսի 29-ին հրապարակված «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ-ի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական խումների հայտարարությունը տրամադրել «Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ նախագահ տիկին Գ. Գաբրիելյանին:

ՀՀ բնապահպանության նախարարի
առաջին տեղակալ



Ս. Պապյան

Արձանագրեց՝
Ի. Հակոբյանը